

1-10. Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ (յուրաքանչյուրը 1-ական միավոր)

1. Չորս ընկերներով միասին 4 ժամ խաղացին դոմինո: Նրանցից յուրաքանչյուրը քանի՞ ժամ դոմինո խաղաց:

1) կես ժամ 2) 1 3) 2 4) այլ արժեք

2. Իրար կողք գրված են 1-ից մեծ և 25-ից փոքր բոլոր պարզ թվերը: Քանի՞ թվանշան կունենա ստացված թիվը:

1) 14 2) 15 3) 16 4) այլ արժեք

3. $aaaa + bbb + ab - a = 2016$ արտահայտության մեջ a և b տառերը փոխարինելով որոշ թվանշաններով ստացվում է ճիշտ հավասարություն: Որքա՞ն է $a+b$ արտահայտության արժեքը:

1) 7 2) 9 3) 12 4) այլ արժեք

4. Տատիկն իր ունեցած խնձորների կեսն ու էլի մեկ խնձոր տվեց մեծ թոռնիկին: Մնացած խնձորների կեսն ու էլի երկու խնձոր տվեց միջնեկ թոռնիկին, իսկ մնացածի կեսն ու էլի մեկ խնձոր տվեց փոքր թոռնիկին: Տատիկի մոտ մնաց մեկ խնձոր: Քանի՞ խնձոր կար տատիկի մոտ:

1) 36 2) 32 3) 26 4) այլ արժեք

5. Առաջին կապոցում կա երկրորդ կապոցից 9 հատով ավել տետր: Առաջին կապոցից վերցրեցին 7 տետր և դրեցին երկրորդ կապոցում: Որքա՞ն կլինի այդ կապոցներում եղած տետրերի քանակների տարբերությունը:

1) 5 2) 2 3) 16 4) այլ արժեք

6. Երբ պարանից կտրեցին 6 մետր, պարզվեց, որ պարանի մնացած մասի երկարությունը 4 մետրով երկար է կտրած մասի երկարությունից: Որքա՞ն էր պարանի սկզբնական երկարությունը:


1) 10 2) 12 3) 16 4) այլ արժեք

7. Մրցույթի ժամանակ Խաչիկը, Վաչիկն ու Հրաչիկը միասին վաստակեցին 97 միավոր: Եթե Խաչիկը վաստակեր 3-ով ավելի քիչ միավոր, իսկ Վաչիկը վաստակեր 4-ով ավելի քիչ միավոր, ապա նրանք կունենային Հրաչիկի չափ միավոր: Քանի՞ միավոր է վաստակել Վաչիկը:

1) 33 2) 34 3) 31 4) այլ արժեք

5-րդ դասարան (տևողությունը 90 րոպե)

8. Առավելագույնը քանի՞ X է հնարավոր դնել 3×3 քառակուսու վանդակներում, որ չլինի տող, սյուն կամ անկյունագիծ, որում գտնվի երեք հատ X :



- 1) 3 2) 4 3) 5 4) այլ արժեք

9. Առաջին պարանը երկրորդից երկար է 72 մետրով: Երբ յուրաքանչյուր պարանից կտրեցին 5-ական մետր, ապա պարզվեց, որ առաջին պարանը երկրորդ պարանից 4 անգամ երկար է: Գտնել պարանների երկարությունների գումարը:

- 1) 96 2) 101 3) 130 4) այլ արժեք

10. Գրված են 5 պնդում

- Ա) Պնդումներից մեկն է սխալ,
- Բ) Պնդումներից չորս հատն է սխալ,
- Գ) Պնդումներից երեք հատն է սխալ,
- Դ) Բոլոր պնդումներն էլ սխալ են,
- Ե) Պնդումներից երկու հատն է ճիշտ:

Որ՞ պնդումն է ճիշտ:

- 1) Ա 2) Բ 3) Դ 4) այլ տարբերակ

11-15. Կարճ պատասխաններով առաջադրանքներ (յուրաքանչյուրը 2-ական միավոր)

11. 3491507201359 թվից ջնջել են 7 թվանշան այնպես, որ ստացված վեցանիշ թիվը լինի հնարավորինս մեծ: Որքա՞ն է ստացված թվի թվանշանների գումարը:

12. Ծննդյան օրվա կապակցությամբ Արշակի մայրը ցանկանում է Արշակի համար խմորեղեն թխել: Խմորեղեն պատրաստելու համար անհրաժեշտ է 7լիտր կաթ: Խանութում կաթը վաճառում են միայն 2լիտրանոց տուփերով: Քանի՞ տուփ կաթ պետք է գնի Արշակի մայրը, որպեսզի կարողանա թխել խմորեղեն:

13. Մեկ արկղ վարունգը մեկ ձմերուկից ծանր է երեք անգամ: Որքա՞ն կկշռի հինգ ձմերուկը, եթե մեկ արկղ վարունգը կշռում է 30կգ:

14. Վաճառականը 54000 դրամով գնեց 138 մետր կտոր (սև և սպիտակ): Պարզել, թե քանի՞ մետր սպիտակ կտոր գնեց վաճառականը, եթե սև կտորի մետրն արժե 500 դրամ, իսկ սպիտակ կտորի մետրը՝ 300 դրամ:

15. Արմենը մաթեմատիկայից ստացել է երեք գնահատական, որոնց միջին թվաբանականը 9 է: Եվս մեկ գնահատական ստանալուց հետո նրա գնահատականների միջինը դարձավ 8: Ի՞նչ գնահատական ստացավ Արմենը: